600.0196.26.05.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2021 թվականի №196Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի №88Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №88Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի՝

1) 1-ին կետի՝

ա. 4-րդ ենթակետի «բ» պարբերությունում «2020» թիվը փոխարինել «2021» թվով.

բ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) կենսազանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններ, որոնք՝

ա. էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում.

բ. ունեն մինչև 30 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում:».

2) 2-րդ կետում «հուլիս ամսից մինչև հաջորդ օրացուցային տարվա հուլիս ամիսն» բառերը փոխարինել «հուլիսի 1-ից մինչև հաջորդ օրացուցային տարվա հունիսի 30-ը ներառյալ» բառերով.

3) 3-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «մայիսի 31-ը ներառյալ ընդունվելու» բառերը փոխարինել «հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու» բառերով, իսկ «հունիսի 1-ից հետո ընդունվելու» բառերը փոխարինել «հուլիսի 1-ից հետո ուժի մեջ մտնելու» բառերով.

բ. 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում «մայիսի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ընդունվելու» բառերը փոխարինել «հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու» բառերով, իսկ «հունիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ընդունվելու» բառերը փոխարինել «հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու» բառերով.

գ. 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «հունվարի 1-ից հետո ընդունվելու» բառերը փոխարինել «նոյեմբերի 1-ից հետո ուժի մեջ մտնելու» բառերով.

դ. 3-րդ ենթակետից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «2.1» և «2.2» ենթակետերը.

«2.1) 5-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն առաջին անգամ սահմանվում է սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ ուժի մեջ մտնելու դեպքում՝ 43.811 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի), իսկ 2021 թվականի հուլիսի 1-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 4-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար.

2.2) 5-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն առաջին անգամ սահմանվում է՝

ա. սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ 2020 թվականի հուլիսի 1-ից

մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ ժամանակահատվածում գործող՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի մեծությանը հավասար, իսկ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված մեծության հիման վրա սույն մեթոդիկայի 4-րդ կետի բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար.

բ. սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը 2022 թվականի նոյեմբերի 1-ից հետո ուժի մեջ մտնելու դեպքում՝ 2022 թվականի հունվարի 1-ից հետո տվյալ տեսակի կայանի լիցենզիա ստացող անձանց համար սահմանված սակագնային կարգավորման համաձայն,».

ե. 4-րդ ենթակետի «ա» պարբերությունում «2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում սահմանվելու» բառերը փոխարինել «2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու» բառերով.

զ. 4-րդ ենթակետի «բ» պարբերությունում «սահմանելուց» բառը փոխարինել «ուժի մեջ մտնելուց» բառերով.

4) 4-րդ կետում «կենսաբանական զանգվածից» բառերը փոխարինել «կենսազանգվածից» բառով, իսկ «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից» բառերը՝ «Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական վիճակագրությունն իրականացնող իրավասու մարմնի կողմից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱԴՐԱՄՅԱՆ

ք. Երևան
26 մայիսի 2021թ.